<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

2019-2020 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(01.09.2019-06.06.2020)

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի Արտաքին կապերի բաժինը՝ այսուհետ ԱԿԲ, կառուցվածքային փոփոխության արդյունքում ստեղծվել է 2019թ. փետրվարի մեկին:

ԱԿԲ-ի հիմնական նպատակն է ապահովել մասնաճյուղի համագործակցությունը այլ ուսումնական հաստատությունների, պետական և ոչ պետական կառույցների և կազմակերպությունների հետ, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում՝ կրթական, հետազոտական, հասարակական ու մշակութային գործունեության ոլորտներում:

ԱԿԲ-ի գործունեությունն իրականացվում է համաձայն 2016-2020 ռազմավարական ծրագրի, մասնաճյուղի կանոնադրության և ԱԿԲ-ի կանոնադրության: Բաժնի աշխատակիցների գործառույթները սահմանված են համապատասխան պաշտոնի անձնագրերում:

1. Դասընթացներ և հանդիպումներ

2019 թվականի օգոստոսից 26-ից մինչև 2020 թվականի հունիսի 6-ը շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների ընթացքում իրականացվել է **19 դասընթացներ և հանդիպումներ**:

1. Ս/Թ օգոստոսի 27 **OXYGEN հիմնադրամի և Save the children կազմակերպության** կողմից իրականացվել է բաց քննարկում «Համընդհանուր հմտությունները՝ որպես շուկայում երիտասարդների մրցունակ լինելու գրավական» թեմայով, որի ընթացքում կազմակերպիչները նաև ներկայացրել են իրենց կողմից երիտասարդների շրջանում իրականացված հարցումների ամփոփումը:
2. Հոկտեմբերի 2-ին հանդիպում <<Մաշտոց>> հիմնադրամի ֆինանսավորվողների և Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս

Գալստանյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են ուսխորհրդի և գիտական ընկերության ուսանողները, ինչպես նաև ֆինանսավորված 25 ուսանողները: Ֆինասավորման արդյունքում յուրաքանչյուր մասնակցի տրամադրվում է 100 հզարական դրամ ուսման վարձի փոխհատուցման նպատակով:

3. Հոկտեմբերի 8-ին պայմանավորվածություն է ձեռք բերվել **«Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերությունը «Մենեջմենթ Միքս» ընկերության** հետ «ԿՅԱՆՔԻ» և «ԲԻԶՆԵՍ» հմտություններ թեմաներով դասընթացներ անցկացնելու նպատակով:
4. Հոկտեմբերի 11-ին ԵՊՀ ԻՄ-ից տասնյակ ուսանողներ մասնակցություն են ունեցել Տավուշի մարզի Տարածքային զբաղվածության կենտրոնի կողմից կազմակերպված սոցիալական քննարկմանը:
5. Հոկտեմբերի 18-ին նախօրոք ընտրված թիրախային խմբով մասնակցություն **«Օքսեջեն»** կազմակերպության կողմից կազմակերպված հանդիպում մարզպետարանում: Հանդիպման նպատակն էր վեր հանել համայնքների խնդիրները:
6. Հոկտեմբերից 24-ից մասնաճյուղում մեկնարկվել է Տավուշի թեմի կողմից իրականացվող **ՄԱՆԱՆԱ** ծրագիրը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ամենշաբաթյա հանդիպումներ հոգևորականների հետ, արդիական խնդիրների քննարկում, հարց ու պատասխան: Կազմակերպվել են նաև ուխտագնացություններ: Ծրագրի նպատակն է ստեղծել միջավայր, որտեղ երիտասարդները հնարավորություն կունենան ծանոթանալ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքին և ավանդույթներին, ինչպես նաև արդիական հարցերի վերաբերյալ արտահայտելու սեփական կարծիքը:
7. Հոկտեմբերի 24-ին կազմակերպվեց հանդիպում **հաջողակ շրջանավարտների հետ,** հանդիպումը նվիրված էր մասնաճյուղի 25-ամյակին: Հանդիպմանը ներկա էին 4 հաջողակ շրջանավարտներ՝ Արարատ բանկի կառավարիչ Թագվոր Մանթաշյանը, Յունիբանկի կառավարիչ Ջուլիետա Ճաղարյանը, Իջևանի ՍՕՍ մանկական գյուղերի

տնօրեն Գևորգ Թադևոսյանը և Ազատամուտի համայնքապետ Վահագն Ալավերդյանը: Հանդիպումը ուներ հատուկ մշակված օրակարգ, յուրաքանչյուր շրջանավարտ խոսեց իր դժվարությունների և հաջողությունների մասին, նրանք խորհուրդներ տվեցին ուսանողներին և կիսվեցին իրենց փորձով:

8. Հոկտեմբերի 25-ից իրականացվել է **«Հակամարտությունների փոխակերպում»** թեմայով հնգօրյա դասընթաց: Դասընթացների նպատակն էր մասնակիցներին ներկայացնել «Հակամարտությունների փոխակերպում» ձեռնարկի 5 թեմաները և երիտասարդների հետ քննարկել, թե ի՞նչ է կոնֆլիկտը, ի՞նչ է կոնֆլիկտի փոխակերպումը, ինչպե՞ս վերլուծել կոնֆլիկտը, ինչպես նաև ներկայացվեց կոնֆլիկտի դերակատարների և կոնֆլիկտի վերլուծության մեթոդների մասին:
9. Հոկտեմբերի 28-ին մարզպետարանում տեղի է ունեցել հանրային քննարկում, որին մասնակցել են 6 ուսանող:
10. Հոկտեմբերի 30-ին Նոյեմբերյանում իրականացվել է **«Հակամարտությունների փոխակերպում»** թեմայով դասընթաց տեղի աշակերտների համար: Դասընթացների նպատակն էր մասնակիցներին ներկայացնել, թե ի՞նչ է կոնֆլիկտը, ի՞նչ է կոնֆլիկտի փոխակերպումը, ինչպե՞ս վերլուծել կոնֆլիկտը, ինչպես նաև ներկայացվեց կոնֆլիկտի դերակատարների և կոնֆլիկտի վերլուծության մեթոդների մասին:
11. Նոյեմբերի 4-ին Քաղաքացիական երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում ուսանողների հետ, հանդիպման նպատակն էր ներկայացնել Քաղլրագրողների եռօրյա դասընթացի ծրագիրը և ծրագրի արդյունքում դրամաշնորհի կատարումը (500$):
12. Նոյեմբերի 13-ին Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից եռօրյա դասընթացի հրավեր Գյումրիում, դասընթացին մասնակցել են առաջին կուրսի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողները:
13. Նոյեմբերի 19-ին հանդիպում նորաբաց Trans.up կազմակերպության ղեկավարների հետ:

14. Դեկտեմբերի 6-8-ը Քաղաքացիական երիտասարդական կենտրոնում իրականացվել է եռօրյա դասընթաց: Թիրախային խումբ հանդիսացել է քաղլրագրությամբ հետաքրքրվող ուսանողները (ծրագրի վերջում կլինի դրամաշնորհ գրելու հնարավորություն):
15. Դեկտեմբերի 19-ին մասնաճյուղում տեղի է ունեցել Կլոր սեղան հիմնադրամի կողմից իրականացվող մեդիա ծրագրի անդամների հետ հանդիպում: Ծրագրի անդամները ստացան նվեր՝ կրիչներ: Մեդիա խմբի անդամները նաև հանդես եկան իրենց առաջարկներով:
16. Փետրվարի 4-ին Տավուշի թեմում իրականացվել է հանդիպում Կլոր սեղան հիմնադրամի համակարգողների հետ: Հանդիպման նպատակն էր ամփոփել 1 տարվա ընթացքում իրականացրած բոլոր ծրագրերը, որոնք ֆինանսավորել է հիմնադրամը:
17. Մարտի 12-ին տեղի է ունեցել հանդիպումներ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողների հետ: Հանդիպման նպատակն էր՝ ուսանողներին ներկայացնել շրջանավարտների հետ տարվող աշխատանքները և ինչով կարող ենք մենք օգտակար լինել շրջանավարտներին:
18. Ապրիլի 28-ից մայիսի 5-ը արտակարգ իրավիճակից ելնելով Կլոր սեղան հիմնադրամի կողմից իրականցվել է հնգօրյա դասընթաց «Հակամարտությունների փոխակերպում» թեմայով: Դասընթացը անց է կացվել այնպիսի ֆորմատով որպեսզի չտուժի դասընթացի արդյունավետությունը: Հեռավար դասընթացի նպատակն էր դասընթացի մասնակիցներին ներկայացնել «Հակամարտությունների փոխակերպում» ձեռնարկի 5 թեմաները և երիտասարդների հետ քննարկել, թե ի՞նչ է կոնֆլիկտը, ի՞նչ է կոնֆլիկտի փոխակերպումը, ինչպե՞ս վերլուծել կոնֆլիկտը, ինչպես նաև ներկայացվեց կոնֆլիկտի դերակատարների և կոնֆլիկտի վերլուծության մեթոդների մասին: Դասընթացի համար նախատեսված դրամաշնորհները հատկացվել են սոցիալապես անապահով

ընտանիքներին սնունդ ապահովելու նպատակով (աջակցության աշխատանքներին մասնակցություն ունեցել են նաև բաժնի աշխատակիցները և ուսանողները):

19. Հունիսի 5-ին առցանց հանդիպում «Կանաչ արահետ» ՀԿ-ի համակարգողների հետ: Հանդիպման նպատակն էր ծանոթանալ ծրագրի ազգային համակարգողների հետ և ստանալ ինֆորմացիա դրամաշնորհ նախաձեռնելու վերաբերյալ:

2. Միջոցառումներ և այցելություններ

2019թ. սեպտեմբերի 2-ին բաժնի կողմից կազմակերպվել է Գիտելիքի և դպրության օրվան նվիրված տոնական միջոցառում: 2019թ. նոյեմբերի 2-ին մարզպետարանում կայացավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 25-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումը: Միջոցառման կազմակերպչական ընթացքը իրականացվել է Արտաքին կապերի բաժնի կողմից: Միջոցառումը չնայած չնախատեսված տեխնիկական փոքր խնդիրների անցավ բավականին բարձր մակարդակով:

2019թ. սեպտեմբերի 25-ին ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հետ համագործակցությամբ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները Արտաքին կապերի բաժնի աշխատակից, շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգող **Էրինե Ղարայանի** ուղեկցությամբ 14 ուսանողներ այցելեցին Շիրակի պետական համալսարան: Այցելության նպատակն էր Շիրակի պետական համալսարանում մասնակցել «Ներառական կրթություն» խորագրով սեմինարին, որը կազմակերպել էին «Հակամարտությունների փոխակերպում» ոչ ֆորմալ կրթական դասընթացի մասնակիցները և ՀԱԵ Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի աշխատակիցները:

Նոյեմբերի 5-ին «Հեռանկարներ և նոր հնարավորություններ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները Մայր բուհում» ծրագրի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի վարիչ՝ **Արման Եգանյանը**, շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգող՝ **Էրինե Ղարայանը**, մարքեթինգային աշխատանքների համակարգող՝ **Արմինե Մելքումյանը** և 20

ուսանողներ հյուրընկալվեցին Մայր բուհում: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել ՀՀ աշխատաշուկայում ուսանողների մրցակցության բարձրացմանը և ընդհանրապես խորացնել Մայր բուհի ու մասնաճյուղի միջև համագործակցությունը: Ուսանողների համար կազմակերպվեց շրջայց ԵՊՀ-ում և «Ինչպես կազմել CV և ներկայանալ հարցազրույցի» թեմայով դասընթաց:

3. Իրականացված դրամաշնորհներ ծրարգրեր

2019թ. սեպտեմբերի 27-ին ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի «Զայն խաղաղությանը» ծրագրի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի կողմից, շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգող **Էրինե Ղարայանը** սահմանամերձ Պառավաքարում իրականացրեց **«Պարգևիր ժպիտ երեխաներին»** խորագրով փոքր դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն էր մասնաճյուղ սահմանամերձ համայնք կապի ամրապնդումը:

2019 թվականի դեկտեմբերի 11-ին Տավուշի մարզի Աչաջուր գյուղի մշակույթի տան գրադարանում իրականացվեց «Նոր գրադարան, նոր գրքեր» ծրագիրը: Այն իրականացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի «Զայն խաղաղությանը» ծրագրի շրջանակում անցկացվող «Հակամարտությունների փոխակերպում» ոչ ֆորմալ կրթական դասընթացի դասընթացավար **Էրինե Ղարայանի** նախաձեռնությամբ:

2019 թվականի նոյեմբեր-դեկտմեբեր ամիսների ընթացքում Իջևանի քաղաքապետարանի՝ քաղաքապետ Հ. Ղալումյան, ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժնի և ԵՊՀ ԻՄ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների՝ ղեկավար Էդգար Սարգսյան, համագործակցությամբ իրականացվել է «Իջևան համայնքի մունիցիպալ կառավարման տեղեկատվական համակարգը ԱՏՀ հիմքով» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր կառուցել Իջևան քաղաքի թեմատիկ քարտեզը բազմաբնույթ շերտերի համադրմամբ, արտապատկերման ժամանակակից մեթոդով ԱՏՀ միջավայրում, այդ թվում եռաչափ մոդելը: Ծրագիրը

հաջողությամբ իրագործվել է 2019թ. դեկտեմբերին: Այն կրել է պիլոտային բնույթ և պայմանավորվածության համաձայն կլինի շարունակական:

2019թ հուլիսին Հայաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) դեսպանատան և ԵՊՀ ԻՄ ԱԿ բաժնի պայմանավորվածության համաձայն 2019թ. դեկտեմբերին Հայաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) դեսպանատունը կազմակերպել էր ԱՄԷ Ազգային օրվա՝ Էմիրությունների միավորման 48-ամյակի կապակցությամբ մեծ ընդունելություն, որի ժամանակ տեղի էր ունեցել ՀՀ լավագույն ուսանողների պարգևատրման արարողությունը: Պարգևատրվել էին ՀՀ պետական բուհերի 14 ուսանողներ, այդ թվում՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող **Գերասիմ Ալավերդյանը**:

2020թ. փետրվարի 3-6-ը կայացավ բարձր տեխնոլոգիաների և հարակից այլ մասնագիտությունների գծով ՀՀ 14 լավագույն ուսանողների այցը Արաբական Միացյալ Էմիրություններ: Այցելության շրջանակներում ուսանողները օթևանեցին ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբիում, այցելեցին ԱՄԷ լավագույն համալսարաններից մեկը՝ Գիտության և տեխնոլոգիայի Խալիֆա համալսարան (“Khalifa University of Science and Technology”), Շեյխ Զայեդի մզկիթ, մասնակցեցին «Իսլամի դրամները» ցուցահանդեսին, ծանոթացան քաղաքի այլ տեսարժան վայրերին:

4. Թափուր հաստիքներ

2019-2020 ուստարվա ընթացում ԱԿ բաժնին տրամադրվել է 62 թափուր հաստիքների մասին ինֆորմաիա, որից 43-ը «Արմատ» ինժեներական լաբորատորիայի կողմից՝ կազմակերպությունը զբաղվում է դպրոցներում լաբորատորիաների ստեղծմամբ: Աշխատանքի առաջարկի նպատակով կազմակերպությանը տրամադրվել է 2016, 2017, 2018, 2019 թվականների շրջանավարտների ցանկը և 1-ին և 4-րդ կուրսի ուսանողների տվյալները), մնացած 19-ը հաստիքները եղել են՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ, հյուրատներ, գովազդային գործակալություն, Գրանդ Քենդի, հաշվապահական գրասենյակ, «Վեոն Արմենիա» Բերդի մասնաճյուղում, Transup.am

կազմակերպություն, «Թրփանճյան» հիմնադրամ, Յելլ էքստրիմ պարկ, Հաղարծնի «Մեղրատուն», Ամերիկյան կենտրոն և այլն: Աշխատանքի է տեղավորվել 23 շրջանավարտ հետևյալ ոլորտներում՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ, գովազդային գործակալություններ, ինժեներական լաբորատորիաներ, հաշվապահական գրասենյակո, Գրանդ Քենդի ընկերություն, շինարարական ընկերություններ, խանութ-սրահ և զբոսաշրջային կազմակերպություն:

Արտակարգ իրավիճակի ընթացքում ուսանողների աշխատանքի խնդիրը բաց չի մնացել, քանի որ արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքները համակարգվել են առցանց, փորձելով ապահովել համագործակցության արդյունավետությունը: Շահակիցների հետ առցանց համագործակցության արդյունքում արտակարգ դրության ժամանակահատվածում շրջանավարտներից **երկուսը** անցել են աշխատանքի:

Շրջանավարտների հետ տարվող անհատական խորհրդատվությունները ևս չեն տուժել. Արտակարգ դրության ժամանակահատվածում առցանց տրամադրվել է անհատական խորհրդատվություն հարցազրույցի ճիշտ ներկայանալու կանոնների մասին:

5. Ընթացիկ աշխատանքներ

2019-20 ուստարվա ընթացքում շրջանավարտների տվյալների մշակում և տրամադրում համապատասխան բաժիններին և շահակիցներին՝

1. Օգոստոսի 31-ին առաջին կուրսեցիների տվյալների փոխանցում ուսանողական խորհուրդին,
2. Հումանիտար և տնտեսագիտական ֆակուլտետին է փոխանցվել 2015-2019 թվականների տղա շրջանավարտների ցանկը,
3. Մաշտոց հիմնադրամի կողմից ֆինանսավորման համար դիմորդների դիմումների հավաքագրում և ցանկի մշակում: Հավաքագրվել է թվով 14 ուսանողի փաստաթղթեր, որից ընտրվել է 7-ը, առաջնահերթություն տրվել է սահմանամերձ և անապահով ընտանիքների ուսանողներին,
4. Իջևանում բացվող նախակրթարանի մասին ինֆորմացիա ստանալու նպատակով կատարվել է զանգեր համապատասխան կառույցներին,

5. Կազմվել է Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանի բոլոր ուսանողների ցանկը (ցանկը կազմվել է տարածաշրջանում թափուր հաստիքների դեպքում արագ կողմնորոշվելու և ինֆորմացիան փոխանցելու նպատակով),
6. Հավաքագրվել է գերազանցությամբ ավարտած շրջանավարտների ցանկը (1995-2019 թթ.-ը կարմիր դիպլոմով ավարտել է 584 շրջանավարտ),
7. Մշակվել է շրջանավարտների ցանկ մագիստրատուրա չավարտածների համար,
8. Մշակվել է որակի բաժնի կողմից պահանջված 2015-2019թթ. շրջանավարտների տվյալները (տվյալները մշակվել են հատուկ ձևաչափով),
9. Թարմացվել է 2015-2019 թթ. շրջանավարտների աշխատանքի և հաջողությունների մասին տվյալները,
10. Նամակներ են ուղարկվել՝ կրթական տարբեր հաստատությունների էլեկտրոնային հասցեներին համագործակցության եզրեր գնտելու նպատակով (արդյունքում կնքվել է հուշագիր Շիրակի պետական համալսարանի հետ),
11. Մագիստրոսական կրթական ծրագրի բացելու նպատակով 550 շրջանավարտների էլեկտրոնային հասցեներին ուղարկվել է հարցում (հարցմանը պատասխանել է 7 շրջանավարտ),
12. Նոյեմբերի 29-ին ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված ռեկտորատի շրջանակներում ընտրված ուսանողին ներկայացվել է բաժնում կատարվող աշխատանքները,
13. Հավաքագրվել է տղա ուսանողների անձնական տվյալները. Հեռակա բաժին տնտեսագիտական ֆակուլտետ՝ 156 ուսանող 124-ը ծառայած, հեռակա բաժին բնագիտական ֆակուլտետ՝ 260 ուսանող 187-ը ծառայած, հեռակա բաժին հումանիտար ֆակուլտետ՝ 130 ուսանող 110-ը ծառայած, առկա բաժնում բոլոր ֆակուլտետները միասին սովորում է 132 ուսանող, որից 40 ծառայած է,

14. **2020** թվականի հունվար ամսին կազմվել է եռամսյակային ժամանակացույց, մշակվել է շրջանավարտների հետ հանդիպման օրակարգը,
15. Դասախոսների վերապատրաստմամբ զբաղվող աշխատանքների համակարգողի հետ քննարկվել է, թե ինչ վերապատրաստումների կարիք ունեն դասախոսները,
16. Տնտեսագիտության ամբիոնի վարիչի հետ համատեղ քննարկումների արդյունքում առաջարկներ արվեց հանդիպումներ և դասընթացներ կազմակերպել հետևյալ թեմաներով՝ էկոնոմետրիկա, անգլերենի դասընթացներ, ինչպես նաև հաճախ կազմակերպվեն հանդիպումներ կենտրոնական բանկի աշխատակիցների մասնակցությամբ: Հանդիպումները կնպաստեն պրակտիկ հմտությունների զարգացմանը: Առաջարկվել է նաև կազմակերպել կլոր սեղան քննարկումներ,
17. Մշակվել է տաբել շրջանավարտների անձնական տվյալների համար,
18. Կատարվել է շրջանավարտների գործառույթների հետ կապված վերլուծություն,
19. Կատարվել է բաժնի կողմից հավաքագրված և նախկին արխիվներից փոխանցված ռեզյումեների տեսակավորում (անհրաժեշտության դեպքում ըստ ուղղությունների օգտագործելու նպատակով),
20. Մշակվել է ամբողջական համագործակցողների ցանկ,
21. Փետրվար ամսին կազմվել է հաջորդական հանդիպումների ցանկ, որը արտակարգ դրության պայմաններում հետաձգվել է անորոշ ժամանակով:
22. Կազմվել է շրջանավարտների հարցման վերլուծության համեմատական դիագրամները (2015, 2016, 2017, 2019),
23. Հույսի կամուրջ հասարակական կազմակերպության աշխատակցի հետ կազմվել է համագործակցության պլան իրենց սաների համար դասընթացներ կազմակերպելու և փոքր ծրագրեր իրականացնելու նպատակով,
24. Accses էլեկտրոնային շտեմարանում թարմացվել է շրջանավարտների տվյալները,

25. Հավաքագրվել է մագիստրատուրա սովորողների տվյալները, որի նպատակն է ունենալ բազա շրջանավարտների կրթության մասին,
26. Փետրվար ամսին զանգեր են կատարվել 12 շահակիցների թափուր հաստիքների վերաբերյալ հարցում կատարելու նպատակով,
27. Մայիսի 26-ին լրացվել է ընկերություններին ներկայացվող որակական չափորոշիչներում պահանջվող համապատասխան կետերը, որոնք վերաբերում էին Արտաքին կապերի բաժնի գործունեությանը (կետերում նշվել է հուշագրերի մասին, համագործակցությունների, շրջանավարտների աշխատանքի անցնելու տոկոսների մասին),
28. Մայիսի 29-ին 4-րդ չափանիշում լրացվել է շրջանավարտների հետ տարվող աշխատանքներին վերաբերող կետերը,

Հասարակայնության հետ կապերի ապահովում

2019 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2020 թ. Հունիսի 6-ը ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի՝ հասարակայնության հետ կապերի ապահովման շրջանակներում իրականացվել են պաշտոնի անձնագրով նախատեսված գործառութային պարտականությունները, որոնք ներառում են բաժնի աշխատանքային պլանով նախատեսված գրագրության, գործավարության և այլ գործառույթների ընթացիկ աշխատանքների, բաժնի վարիչի աշխատանքային հանձնարարականների կատարում և այլն:

Հասարակայնության հետ կապերի (PR) ապահովման շրջանակներում տարվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան էջում ու խմբում իրականացվել են տարբեր հրապարակումներ, բովանդակային (ինչպես և կառուցվածքային) փոփոխություններ:

Մասնաճյուղի էլ. կայքը **2019 թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ** ուներ **255 էջ**, տեղադրված էր **2912 նյութ՝ 1198 հայտարարություն, 1481 նորություն, 106-ը իրադարձություն, 69 գիտական կոնֆերանս**, **90 տնօրենության նիստ**, **15185 ֆայլ**, որոնցից **10690-ը՝ նկարներ**:

2020 թ. Հունիսի 6 -ի դրությամբ մասնաճյուղի կայքն ունի **256 էջ**, տեղադրված է **3007 նյութ,** որից **11091 ը՝ նկարներ**:

Հաշվետու ժամանակամիջոցում (2019 թ. սեպտեմբեր – 2020 թ. Հունիսի 6) ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջի **«Ինֆորմացիա»** բաժնում տեղադրվել է՝

1. **«ԶԼՄ-ները մեր մասին»** էջում՝ **35 հոդված ու տեսանյութ,**
2. **«Հայտարարություններ»** էջում՝ **73 հայտարարություն,**
3. **«Նորություններ»** էջում՝ **128 նորություն,**
4. **«Իրադարձություններ»** էջում՝ **2 իրադարձություն,**
5. **«Գիտական կոնֆերանսներ, նստաշրջաններ»** էջում՝ **3 գիտական կոնֆերանս, նստաշրջան,**
6. **«Տնօրենության նիստեր»** էջում՝ **8 նիստ,**
7. **«Հարց-պատասխան» էջում՝ 6 հարցուպատասխան** (2019 թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ ընդհանուր տեղադրվել էր **74 հարցուպատասխան**):

2019 թ. սեպտեմբեր – 2020 թ. հունիս ամիսներին կայքի այցելությունները ներկայացնում են հետևյալ պատկերը.





Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներից հատկանշական են 2011 թվականից **“Facebook”** սոցիալական ցանցում գործող **խումբը** (**https://www.facebook.com/groups/studentibysu**, 2019 թ. դեկտեմբերի դրությամբ՝ **2723 անդամ,** 2020 թ. հունիսի 6-ի դրությամբ՝ **2812 անդամ**), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ **“Facebook”** սոցիալական ցանցում գործող **էջը** (**https://www.facebook.com/ysuib**, 2019 թ. դեկտեմբերի դրությամբ՝ **4179 հետևորդ,** 2020 թ. հունիսի 6-ի դրությամբ՝ **4482 հետևորդ**):

Պաշտոնական կայքէջ

2019թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջում ստեղծվել է ամբիոններում աշխատակազմի վերաբերյալ ինֆորմացիայի արխիվ, գլխավոր էջում ստեղծվել է էջեր՝ կրթական ծրագրերի ղեկավարների և կրթական ծրագրերի վերջնարդյունքների վերաբերյալ, դիմորդների համար անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու նպատակով:

Հեռակա ուսուցման կայքէջը միացվել է մասնաճյուղի պաշտոնական կայքէջին: Մասնաճյուղի «կառուցվածք» բաժնում ստեղծվել է նոր էջ՝ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի վերաբերյալ անհրաժեշտ ինֆորմացիայով: Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասում ստեղծվել է ուղեցույցների էջ:

Համակարգվել է «Փաստաթղթեր» բաժնում կանոնադրությունների, կանոնակարգերի և կարգերի էջերը:

Մասնաճյուղի պաշտոնական կայքէջի հաշվետու ժամանակահատվածը ընդգրկում է 2019թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները, քանի որ կառացվածքային փոփոխության արդյունքում Կայքի պատասխանատու հաստիքը կրճատվել է ԱԿ բաժնից և 2020թ տեղափոխվել Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին:

Արտաքին կապերի բաժնի կողմից համակարգվում է 2 ֆեյսբուքյան էջեր՝ ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժին՝ https://www.facebook.com/EphImArtaqinKaper/ և ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ կապ՝ https://www.facebook.com/alumniysuib/:

Արտակարգ դրության ժամանակահատվածում 2020 թվականի մարտի 16-ից մինչև 2020 թվականի հունիսի 6-ը էջերում ավելացվել են հետևորդների քանակը. ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժին՝ **464 հետևորդ**, ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ կապ՝ **680 հետևորդ**: ԵՊՀ ԻՄ արտաքին կապերի բաժին էջում կատարվում է ամենօրյա հրապարկումներ բոլոր միջոցառումների, կրթական դասընթացների, կրթաթոշակների և այլ ուսումնական փոփոխությունների իրազեկման վերաբերյալ: Էջին հաճախ ուղված ուսումնական պրոցեսին վերաբերվող հարցերին, տրվել են սպառիչ պատասխաններ: Էջում տեղադրվել է 20 տեսանյութ: Տեսանյութերը պարունակել են ուսուցողական նյութեր և տարբեր այլ իրադարձություններ:

ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ կապի էջում տեղադրվել է թափուր հաստիքների և դասընթացների վերաբերյալ տեղեկություններ:

Արտաքին կապերի բաժինը իր գործունեության ընթացքում իրականացրել է հնարավորին աշխատանքները ուսումնական գործընթացի զարգացման և համագործակցությունների ավելացման ուղությամբ:

Պայմանագրեր, հուշագրեր, ուսանողական կրթաթոշակներ

ԱԿ բաժնի **2019-2020 ուստարվա** կարևորագույն ձեռքբերումից է համագործակցության շրջանակների ընդլայնումը: Վերոնշյալ ժամանակահատվածում հուշագրեր են կնքվել պետական և տեղական

հաստատությունների, ուսումնական հաստատությունների, հիմնադրամների, հասարական կազմակերպությունների և մի շարք այլ շահակիցների հետ։

2019 թվականի օգոստոսի 29-ին պայմանագիր է վերակնքվել **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի** հետ։ Հիմնադրամը նոր տեխնոլոգիաների միջոցով իրականացնում է անգլերեն լեզվի տարածում մարզի հեռավոր շրջաններ, որի իրականացման համար համալսարանը տրամադրում է համապատսխան վերազինված տարածք, այդպիսով հանդիսանալով կապող օղակ ԲՈՒՀ- հեռավոր շրջանների երիտասարդության միջև։

2019թ. հոկտմեբերի 14-ին Մասնաճյուղի և Իջևան քաղաքի թիվ 5-րդ հիմնական դպրոցի միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել։ Հուշագրի նպատակն է համատեղ ուժերով ներգրավել ԵՊՀ ԻՄ դասախոսներին «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում դպրոցում բացված մասնագիտական կողմնորոշման ակումբի աշխատանքներում:

2019 թվականի հոկտեմբերի 19-ին մասնաճյուղը համագործակցության հուշագիր է կնքել **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետ**: Հուշագրի նպատակն է կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումը, համագործակցության ծրագրերի իրականացումը:

2019թ. հունիսին ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն 2019 թ. դեկտեմբերի 2-ին մասնաճյուղը համագործակցության պայմանագիր է կնքել **Փրոջեքթ հարմոնի հայկական մասնաճյուղի** հետ, որի արդյունքում մասնաճյուղում ստեղծվել է «Ամերիկյան գրադարան և դասընթացի» կենտրոն: Կենտրոնում փետրվարի 17-ից մեկնարկվել է անգլերենի ուսուցման առաջին անվճար դասընթացը։ Ամերիկյան կենտրոնի առկայությունը մեծ խթան է ուսանողների և աշխատակիցների օտար լեզվի իմացությունը զարգացնելու համար, պարբերաբար քննարկումների միջոցով օտար լեզվի խոսակցական ունակությունների զարգացման համար։

2019թ. դեկտեմբերի 24-ին համագործակցության հուշագիր է կնքվել մասնաճյուղի և Հայկական Կարմիր Խաչի ընկերություն Տավուշի մարզային մասնաճյուղի միջև։

Համագործակցության հիմնական ուղղություններն են.

- Համատեղ ծրագրերի իրականացում, միջոցառումների կազմակերպում։
- ուսանողների պրակտիկաների կազմակերպում և անցկացում,
- ՀՀ Տավուշի մարզի միայնակ առավել խոցելի տարեցների, երեխաների ու երիտասարդների, անհայտ կորածների ընտանիքների, անապահով ընտանիքների, խոցելի համայնքների այցերի իրականացում,
- ծրագրերի իրականացմանն ուղղված երիտասարդների հավաքագրմանը, տեխնիկական միջոցների տրամադրմանը, տեղեկատվության տարածման աջակցում,
- բազմաբովանդակ համագործակցություն՝ միտված միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտում կրթության և հետազոտական գործունեության խթանմանը,
- ԵՊՀ ԻՄ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվում միջազգային մարդասիրական իրավունքի հիմնախնդիրների քննարկմանը նվիրված միջոցառումներին,

Արտակարգ դրության պայմաններում ԱԿ բաժնի և Հայկական Կարմիր Խաչի ընկերություն Տավուշի մարզային մասնաճյուղի համագործակցությամբ իրականացվել են կամավորական աշխատանքներ, կատարվել են Տավուշի մարզի մի շարք սահմանամերձ գյուղեր, միայնակ ծերերին տրամադրվել են անհրաժեշտ սոցիալական օգնություն։

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության հուշագիր է ստորագրվել մասնաճյուղի և ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի միջև։ Համագործակցության նպատակն է.

- ներգրավել Կենտրոնի մասնագետներին ԵՊՀ ԻՄ տնտեսագիտական ֆակուլտետում մասնագիտական դասընթացների դասավանդմանը,
- տրամադրել մեթոդական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն սույն հուշագրի շրջանակներում իրականացվող ծրագրերում,
- Ներառել ԵՊՀ ԻՄ ուսանողներին իրենց կադրային բազայում,

- ԵՊՀ ԻՄ տնտեսագիտական ֆակուլտետում պարբերբար իրականացնել սեմինար-քննարկումներ տնտեսության արդի խնդիրների վերաբերյալ,
- իրականացնել «Ֆինանսներ» կրթական ծրագրի ըստ ոլորտի բենչմարքինգ, մոնիթորինգ և բարելավում,
- կազմակերպել ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների մասնագիտական և լրացուցիչ պրակտիկաները:

Հաշվետու ժամանակահատվածում Մասնաճյուղը բավականին ընդլայնել է համագործակցությունը Իջևանի թիվ N զորամասի հրամանատարության հետ, որի արդյունքում 2019թ. դեկտմեբերին մշակվեց համատեղ միջացառումների պլան, որի հիմնական ուղղություններն են.

- Իրականացնել այցեր ՀՀ Տավուշի մարզի սոցիալական ծանր վիճակում գտնվող ազատամարտիկների ընտանիքներ:
- Կազմակերպել միջոցառումներ, ուղղված ՀՀ Տավուշի մարզի բնակչության ռազմահայրենասիրական ոգու բարձրացմանը:
- Իրականացնել այցեր Տավուշի մարզի տարբեր զորամասեր:

Համագործակցության արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ ՊՆ N զորամասի հետ համատեղ տեղի ունեցավ առաջին միջոցառումը՝ «Կրակային պատրաստվածություն», որի արդյունքում Մասնաճյուղից թվով 130 մասնակից՝ ուսանողներ, դասախոսներ և վարչական աշխատողներ, մասնակցեցին «Կրակային պատրաստվածություն» միջոցառմանը:

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության հուշագիր է կնքվել մասնաճյուղի և «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ- միջև, որի նպատակն է համատեղ ուժերով նպաստել սոցիալական գործընկերության փոխազդեցության շրջանակներում պատրաստելու և վերապատրաստելու միջին օղակի մասնագետներին նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ ոլորտի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

04.04.2019թ. մասնաճյուղ և Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի միջև կնքված պայմանգրի համաձայն 2020թ. սեպտեմբերից հինգ ամիս տևողությամբ Տավուշի Թեմի կողմից տրամադրվել է յուրաքանչյուր ամիս 10.000-ական դրամ առավել հասարակական ակտիվություն ցուցաբերած ուղանողի, որի ընտրությունը կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահության կողմից: Պայմանավորվածության համաձայն 2020թ սեպտմեբերից վերոնշյալ պայմանագիրը կվերակնքվի: Արտակարգ դրության պայմաններում համագործակցությունը ևս շարունակվել է Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի հետ, որի արդյունքում ս/թ ապրիլի 11-ին ԱԿ բաժինը միացավ Տավուշի Թեմի «Մենք հանձնառու ենք, մենք հաղթելու ենք» նախաձեռնությանը, ինչպես նաև փաթեթների պատրաստման և կամավորական աշխատանքերին:

01.04.2019թ. մասնաճյուղ և Իջևանի համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի համաձայն 2020թ. սեպտեմբերից հինգ ամիս տևողությամբ, յուրաքանչյուր ամիս 10.000դր. <<Իջևան>> քաղաքի անվանական կրթաթոշակ է տրամադրվել վերջին 3 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողի: Պայմանավորվածության համաձայն 2020թ. սեպտմեբերից տաս ամիս տևողությամբ կտրամադրվի <<Իջևան>> քաղաքի անվանական կրթաթոշակը, նույն սկզբունքերի համաձայն:

01.07.2019թ. նյութական օգնություն ցուցաբերելու մասին պայմանագրի համաձայն 2020թ. սեպտեմբերին Ն. Ղալթախչյանի կողմից տրամադրվել է միանվագ 50.000 դրամ օգնություն Հեռակա ուսուցման բաժնի ծանր սոցիալական վիճակում գտնվող ուսանողի:

Մասնաճյուղի և <<Մաշտոց>> հիմնադրամի միջև կնքված հուշագրի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում թվով 25 ուսանողեր ստացել են 100 հազարական դրամ ուսման վճարի փոխհատուցում: Նախնական պայմանավորվածության համաձայն 2020թ. սեպտեմբերից հավանական է 25 ուսանողների թիվ դառնալ 50 ուսանող:

2019-20 ուստարվա ընթացքում ԱԿ բաժինը ջանք չի խնայել էլ ավելի ընդլայնելու համագործակցությունը Հայ օգնության ֆոնդի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղից 7 ուսանողներ ՀՕՖ-ի Մաթևոսյան կրթվճար ծրագրի շրջանակներում տրամադրվել է ուսման վճարի ամբողջական փոխհատուցում: ՀՕՖ-ի մեկ այլ ծրագրով Հինդլյան անվան կրթավճար ծրագրով ներառված 14 ուսանողներիի տրամադրվել է ուսման վճարի ամբողջական և մասնակի փոխհատուցում:

Ուրախալի է, որ ՀՕՖ-ը ընդլայնում է ուսանողներին աջակցելու ծրագրերը, որի վառ օրինակն է Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից <<Անուշ Մաթևոսյան կրթավճար>> ծրագրի մրցույթ, 2020-2021 ուսումնական տարում ՀՀ պետական բուհեր ընդունվող ուսանողների համար: Այդ բուհերի ցանկի մեջ ներառված է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

2020-2021թթ. ուստարվա համար Հայ կրթական հիմնարկությունը հայտարարել է վճարովի համակարգում սովորող ուսանողների համար կրթաթոշակներ ուսման վարձի չափով:

Մասնաճյուղում շարունակում է իր գործունեությունը Ջինիշյան հիշատակի հիմնադրամի <<Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար>> ծրագիրը, որի նպատակն է ուսանողների համար կազմակերպել ունակությունների զարգացման տարաբնույթ դասընթացներ:

Մասնաճյուղում շարունակում է իր գործունեությունը ծավալել Խաղախության կորպուսը իր կամավորի միջոցով, որի նպատակն է զարգացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների անգլերենի խոսակցական մակարդակը:

Հաշվետու ժամանակահատվածի համար որպես թերացում կարող ենք նշել միջազգային պայմանագրերի, ծրագրերի, ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի բացակայություն: Այդ բացթողումն ունի օբյեկտիվ պատճառ, քանի որ հանդիսանալով Մայր բուհի մասնաճյուղ իրավական առումով մասնաճյուղը առանձին պայմանգրերի կնքման իրավունք չունի:

2019թ. նոյմբերի 5-ին ԱԿ բաժնի վարիչ **Ա. Եգանյանը** հանդիպում է ունեցել ԵՊՀ Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր **Ա. Իսրայելյանի** հետ: Քննարկելով վերոնշյալ օբյեկտիվ բացը ձեռք է բերվել համաձայնություն, որ Մայր բուհում առկա բոլոր ծրագրերից, որը համահունչ

է մասնաճյուղի հնարավորությանը կարող են օգտվել և մասնաճյուղի պրոֆեսորդասախոսական անձնակազմը և ուսանողները: Պայմանավորվածության համաձայն նմանատիպ ծրագրերի ինֆորմացիան ուղարկվել ԱԿ բաժնի էլեյտրոնային հասցեին: **Ա. Իսրայելյանի** առաջարկով քննարկում եղավ նաև Մասնաճյուղում չինարեն լեզվի կենտրոնի բացման շուրջ, որը ցավոք համավարակի պայմաններում փոքր ինչ ձգձգվում է:

Մմփոփելով հաշվետու ժամանակահատվածը ԵՊՀ ԻՄ-ի Արտաքին կապերի բաժնի կողմից խորին շնորհակալություն ենք հայտնում Տավուշի թեմին, պետական ոչ պետական կառույցներին, Իջևանի N զորամասին, ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, Հ/Կ ոլորտի ներկայացուցիչներին, անհատներին և բոլորին արդյունավետ համագործակցության համար: Համագործակցությունը լինելու է շարունակական և էլ ավելի ընդլայնված: